

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՊԱՐԵՏԻ ՈՐՈՇՈՒՄ

07 հուլիսի, 2020 N 36

ՏՆՏԵՍՎԱՐՈՂԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԻՐԱՌՎՈՂ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՄԱՆ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով Արցախի Հանրապետության Նախագահի 2020 թվականի ապրիլի 12-ի «Արցախի Հանրապետությունում արտակարգ իրավիճակ հայտարարելու մասին» ՆՀ-32-Ն հրամանագրի 2-րդ, 6-րդ, 7-րդ կետերով և հրամանագրի հավելվածի 27-րդ կետով, ինչպես նաև հիմք ընդունելով ԱՀ Շուշիի շրջանի վարչակազմի աշխատակազմի աշխատակիցների կողմից 2020 թվականի հուլիսի 6-ին իրականացված մշտադիտարկման արդյունքում կազմված արձանագրությունը՝ **ո թ ո շ ու մ ե մ**.

1. 24 ժամով արգելել Առնոլդ Հովսեփյան Ա/2 (ՀՎՀՀ 92102735) Շուշի քաղաքի Պողոսյանի 5/2 հասցեում գտնվող օբյեկտի գործունեության ծավալումը:
2. ԱՀ Շուշիի շրջանի վարչակազմի ղեկավարին՝ ապահովել տնտեսվարողին սույն որոշման մասին տեղեկացումը:
3. Տնտեսվարողի գործունեությունը արգելվում է տեղեկացման պահից:
4. ԱՀ ոստիկանության պետին՝ ապահովել սույն որոշման 1-ին կետի պահանջների կատարման նկատմամբ ամբողջական վերահսկողությունը:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:



Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ